8.24 Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

8.25 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

¹¹ Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգի միջավայրով չափաբաժիններով:

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

9.6 Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

9.7 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9.8 Պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

10. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԸ

10.1 Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ տոկոսին: Որակավորման ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների ձևով (հավելված 4) : Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ, իսկ շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման դեպքում՝ պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ:

4.1/ *

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ որակավորման ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ որակավորման ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ: Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովումը շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման դեպքում այն ներկայացնողին վերադարձվում է վերջինիս կողմից

^{4.1} Եթե գնման հայտով տրված չափաբաժնի գինը.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը և գնման առարկա չեն հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունները, ապա սույն պարբերությունից հանվում են << կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների >> բառերը:

-- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, բայց ավելի է քսանհինգապատիկից, կամ պակաս է քսանհինգապատիկից, սակայն գնման առարկա են հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունները, ապա սույն պարբերությունից հանվում են << տուժանքի (հավելված 4.2) կամ >> բառերը, իսկ <<20>> թիվը փոխարինվում է <<90>> թվով,

- գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն պարբերությունից հանվում է << տուժանքի (հավելված 4.2) կամ >> բառերը, <<15>> թիվը փոխարինվում է <<30>> թվով, իսկ <<20>> թիվը՝ <<90>> թվով,

պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է հավելված 4-ի համաձայն:¹²

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

10.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:¹³

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովումը ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսի նկատմամբ:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

10.6 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար **համայնքի ավագանու** որոշման հիման վրա⁶:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Սույն ընթացակարգը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե սույն ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ էլեկտրոնային գնումների համակարգը խափանված է:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ

¹² Եթե՝

- տվյալ ընթացակարգի շրջանակում չի կիրառվում 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա տվյալ պարբերությունը հանվում է հրավերից, իսկ 5-րդ պարբերությունից հանվում է “կամ հավելված 4.1” բառերը.

- տվյալ ընթացակարգի շրջանակում կիրառվում է 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա 4-րդ և 5-րդ պարբերությունների փոխարեն սահմանվում է հետևյալ պայմանը՝ “Պայմանագրի կատարման յուրաքանչյուր փուլի արդյունքն ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնությամբ: Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է 4.1 հավելվածի համաձայն: ” , իսկ հավելված 4-ը հրավերից հանվում է .

¹³ Եթե գնման հայտով գնվելիք ծառայության գինը չի գերազանցում 25 մլն. ՀՀ դրամը, ապա “բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով” բառերը փոխարինվում են “միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով” բառերով իսկ 3-րդ պարբերության մեջ նշված <<90>> թիվը փոխարինվում է <<20 >> թվով

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.2 Գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով:

2) դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

12.5 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն:

2) պատվիրատուի անվանումը և հասցեն:

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան:

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900006000482» գանձապետական հաշվին:

7) այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը:

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.6 Բողոքը՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ներկայացվում է Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մելիք-Աղամյան 1 հասցեով կամ դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը secretariat@minfn.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

12.7 Բողոքը, այդ թվում՝ մասնակի, բավարարվելու մասին բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշում կայացրած բողոքներ քննող անձը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետ վերադարձվող գումարը: Լիազորված մարմինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին՝ ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

12.8 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա այն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ անձն այդ մասին գրությամբ տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով երկու աշխատանքային օր ժամկետ արձանագրված թերությունները վերացնելու համար: Գրությունը ելքագրվելու օրը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը ուղարկում է նաև բողոքում նշված էլեկտրոնային փոստի հասցեին: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 12.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

12.9 Բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ անձը բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, հայտարարության մեջ նշվում է բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց հետևելու համացանցային հղումը: Բողոքը համարվում է վարույթ ընդունված արձանագրված թերությունների վերացման վերաբերյալ սույն հրավերի 12.8 կետով նախատեսված ժամկետը լրանալու, իսկ թերությունները վերացված բողոքը ներկայացվելու դեպքում, այն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրվելու օրվանից:

12.10 Բողոքը վարույթ ընդունվելու օրվանից երկուաշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գրությամբ դիմում է պատվիրատուին՝ բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, ինչպես նաև բողոքի քննության և որոշում կայացնելու համար անհրաժեշտ՝ գրությամբ նշված փաստաթղթերը ներկայացնելու պահանջով՝ կցելով բողոքի պատճենը և կից փաստաթղթերը՝ առկայության դեպքում: Բողոքի վերաբերյալ պատվիրատուի դիրքորոշումը և պահանջված փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվում են գրավոր կամ դրանց բնօրինակից արտատպված (սկանավորված) ձևով՝ սույն հրավերի 12.5 կետում նշված էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

12.11 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.12 Բողոքի քննությունն իրականացվում և որոշումը կայացվում է բողոքը վարույթ ընդունվելու օրվանից ոչ ուշ քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված միջանկյալ որոշմամբ: Ընդ որում միջանկյալ որոշումը կայացնելու օրը գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ապահովում է դրա մասին համապատասխան հայտարարության հրապարակումը տեղեկագրում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

12.13 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման.

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

12.14 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.15 Բողոքի քննությունը բաց է հանրության համար: Բողոքի քննությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը ձայնագրվում են և բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ մեկտեղ հրապարակվում են տեղեկագրում: Ձայնագրման անհնարինության դեպքում նիստերը սղագրվում: Նիստերը առցանց հեռարձակվում են նաև համացանցում:

12.16 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.17 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշումն կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

12.18 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.19 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Օրենքի 51-րդ հոդվածի համաձայն գնումների հետ կապված բողոքներ բողոքը քննող անձը կայացնում է գնման գործընթացի կասեցումը հանելու մասին որոշում, եթե օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարները, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարը գրավոր հայտնում է, որ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումները համապատասխանաբար կամ պաշտպանության և ազգային

անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՄԱՍ II Հ Ր Ա Հ Ա Ն Գ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄԻ Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հավելված 1.3-ի՝ ըստ անհրաժեշտության (zip ֆայլ):

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).¹⁵

2.4 նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր /սույն հրավերի 2.4 կետ/

2.5 աշխատանքային ռեսուրսներ՝ հավելված 3

2) «Ֆինանսական չափորոշիչ».

2.5 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

2.6 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.7 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

¹⁵ Համարել գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

**ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
գնանշման հարցման մասնակցելու**

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

_____ -ի կողմից «ԵՔ-ԳՀԽԾՁԲ 21/86» ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

գնանշման հարցումի _____ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____ -ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____
հարկի վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ _____
գործունեության հասցեն

հեռախոսահամարն է՝ _____
հեռախոսի համարը

Սույնով _____ -ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանումը

1) բավարարում է ԵՔ-ԳՀԽԾՁԲ 21/86»* ծածկագրով գնանշման հարցումի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակցի ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում⁷ .

2) ԵՔ-ԳՀԽԾՁԲ 21/86»* ծածկագրով գնանշման հարցումի մասնակցելու շրջանակում՝

• թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

• բացակայում է հրավերով սահմանված՝ _____ -ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _____ -ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _____ -ին
մասնակցի անվանումը

⁷ Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակցի ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են << հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը:

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է _____-ի իրական շահառուների վերաբերյալ
մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ -----**

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**

- Մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, եթե այդ մասնակիցը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները,

- եթե մասնակիցը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները
ապա դիմում հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր՝ համաձայն հավելված 1Ձ2ի>> բառերով,

-եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկավորություն չի ներկայացնում:

ՁԵՎ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

1. Կազմակերպությունը

1.1. Կազմակերպության տվյալները

1.1.1. Անվանումը	
1.1.2. Անվանումը լատինատառ	
1.1.3. Պետական գրանցման համարը	
1.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին	
1.1.5. Գրանցման հասցեն	
1.1.6. Գրանցման պետությունը	
1.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը

1.2.1. Հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը	
1.2.2. Հայտարարագիրը ներկայացնող անձի պաշտոնը	

1.3. Հայտարարագրի ներկայացուցիչը

1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին	
1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը	

1.3.3. Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը	
---	--

2. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

2.1. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

2.1.1. Ֆոնդային բորսայի անվանումը	
2.1.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին	

2.2. Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները

2.2.1. Անվանումը	
2.2.2. Անվանումը լատինատառ	
2.2.3. Պետական գրանցման համարը	
2.2.4. Գրանցման օրը, ամիսը, տարին	
2.2.5. Գրանցման հասցեն	
2.2.6. Գրանցման պետությունը	
2.2.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

2.3. Վերահսկողության մակարդակը

2.3.1. Մասնակցության չափը (%)	
2.3.2. Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

3. Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը

3.1. Պետության կամ համայնքի մասնակցությունը

3.1.1. Պետության անվանումը	
3.1.2. Համայնքի անվանումը	
3.1.3. Մասնակցության չափը (%)	
3.1.4. Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

3.2. Միջազգային կազմակերպության մասնակցությունը

3.2.1. Միջազգային կազմակերպության անվանումը	
3.2.2. Միջազգային կազմակերպության անվանումը (լատինատառ)	
3.2.3. Մասնակցության չափը (%)	
3.2.4. Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն

4. Իրական շահառուի տվյալները

4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները

4.1.1. Անունը	
4.1.2. Ազգանունը	
4.1.3. Անունը (լատինատառ)	
4.1.4. Ազգանունը (լատինատառ)	

4.1.5. Քաղաքացիությունը	
4.1.6. Ծննդյան օրը, ամիսը, տարին	

4.2. Անձը հաստատող փաստաթուղթը

4.2.1. Փաստաթղթի տեսակը	
4.2.2. Փաստաթղթի համարը	
4.2.3. Տրամադրման օրը, ամիսը, տարին	
4.2.4. Տրամադրող մարմինը	
4.2.5. ՀԾՀ կամ համարժեք համարը	

4.3. Անձի հաշվառման հասցեն

4.3.1. Պետությունը	
4.3.2. Համայնքը	
4.3.3. Վարչատարածքային միավորը	
4.3.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը	

4.4. Անձի բնակության հասցեն

4.4.1. Պետությունը	
4.4.2. Համայնքը	
4.4.3. Վարչատարածքային միավորը	
4.4.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը	

4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)

<input type="checkbox"/> ա՞ ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում	
4.5.1. Մասնակցության չափը (%)	
4.5.2. Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն
<input type="checkbox"/> բ՞ տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով	
<input type="checkbox"/> գ՞ հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ	

4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)

<input type="checkbox"/> ա՞ ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում	
4.6.1. Մասնակցության չափը (%)	
4.6.2. Մասնակցության տեսակը	<input type="checkbox"/> Ուղղակի մասնակցություն <input type="checkbox"/> Անուղղակի մասնակցություն
<input type="checkbox"/> բ՞ իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը	
<input type="checkbox"/> գ՞ իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ	

<input type="checkbox"/> դ) իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով
<input type="checkbox"/> ե) հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ

4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները

4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին	
4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը	<input type="checkbox"/> Առանձին <input type="checkbox"/> Փոխկապակցված անձանց հետ համատեղ
4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ

4.8. Իրական շահառուի կոնտրակտային տվյալները

4.8.1. Էլ) փոստի հասցեն	
4.8.2. Հեռախոսահամարը	

5. Միջանկյալ իրավաբանական անձինք

5.1. Կազմակերպության տվյալները

5.1.1. Անվանումը	
5.1.2. Անվանումը լատինատառ	
5.1.3. Պետական գրանցման համարը	

5.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին	
5.1.5. Գրանցման հասցեն	
5.1.6. Գրանցման պետությունը	
5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	

5.2. Իրական շահառուի տվյալները

5.2.1. Իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ	

5.3. Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետիրոջների ցուցակման տվյալները

5.3.1. Ֆոնդային բորսայի անվանումը	
5.3.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին	

6. Լրացուցիչ նշումներ

Լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին



I. Հայտարարագրի լրացման կարգը

1. Հայտարարագրի 1-ին բաժնում (Կազմակերպությունը) լրացվում են հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) տվյալները: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով²

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են Կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և պետական գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.

2) «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը.

3) «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Հայտարարագրի 2-րդ բաժինը (Բաժնետոմսերի ցուցակման տվյալները) լրացվում է, եթե Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ իրական շահառուների համարժեք բացահայտման չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկում ներառված շուկայում: Նշված չափանիշներին համապատասխանելու դեպքում այս բաժինը լրացվում է Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի համար: Այս բաժինը լրացնելու դեպքում հայտարարագրի հաջորդ բաժինները ենթակա չեն լրացման, բացառությամբ 5-րդ բաժնի, որը լրացվում է, եթե Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձը Կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով²

1) «Բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին՝ առկայության դեպքում այն փաստաթղթերին, որոնք

պարունակում են տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի սեփականատերերի վերաբերյալ.

2) «Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացված տվյալները վերաբերում են ոչ թե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձին, այլ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի: Այս ենթաբաժնում լրացվում են Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը.

3) «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները: Այս ենթաբաժնում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

3. Հայտարարագրի 3-րդ բաժինը (Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը) լրացվում է, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունի որևէ պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Բաժինը կարող է լրացվել մի քանի անգամ, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեն մի քանի պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով՝

1) «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Պետության մասնակցության դեպքում այս ենթաբաժնում լրացվում է պետության, իսկ համայնքի մասնակցության դեպքում՝ նաև համայնքի անվանումը: Այս ենթաբաժնում լրացվում են նաև իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները

կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

2) «Միջազգային կազմակերպության մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է միջազգային կազմակերպության ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Այս ենթաբաժնում լրացվում են միջազգային կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ), իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում միջազգային կազմակերպության մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

4. Հայտարարագրի 4-րդ բաժինը (Իրական շահառուի տվյալները) լրացվում է յուրաքանչյուր իրական շահառուի համար առանձին՝ Կազմակերպության իրական շահառուների քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով²

1) «Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի անձնական տվյալները: Տվյալները լրացվում են այնպես, ինչպես դրանք լրացված են իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթում: Եթե անձի անունը և ազգանունը հայերեն կամ լատինատառ առկա չեն վերջինիս անձը հաստատող փաստաթղթում, ապա հայտարարագրում լրացվում է դրանց տառադարձությունը.

2) «Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնում լրացվում են տեղեկությունների իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ.

3) «Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի հաշվառման վայրի հասցեն.

4) «Անձի բնակության հասցեն» ենթաբաժինը լրացվում է, եթե իրական շահառուի հաշվառման հասցեն տարբերվում է վերջինիս բնակության հասցեից: Այս ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի բնակության վայրի հասցեն.

5) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը չի հանդիսանում ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Այս ենթաբաժնում նշվում է, թե «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքով նախատեսված որ հիմք(եր)ով է անձը հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, և ներառվում են այդ հիմքերի առնչությամբ պահանջվող տեղեկությունները: Մեկից ավելի

հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով²

ա² Այս ենթաբաժնի «ա» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային) տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն): Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից: «Մասնակցության չափը» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ: Մասնակցության չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը: Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը: «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին: Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության դեպքում նշում է կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության վերաբերյալ.

բ² Այս ենթաբաժնի «բ» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է

Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

գ² Այս ենթաբաժնի «գ» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

6) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Իրական շահառուների բացահայտումն իրականացվում է Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված չափանիշներով: Այս ենթաբաժնում նշումները կատարվում են սույն կարգի 4²5-րդ կետում սահմանված կանոնների հաշվառմամբ: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով²

ա² Այս ենթաբաժնի «ա» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Այս ենթաբաժինը լրացվում է սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

բ² Այս ենթաբաժնի «բ» կետում կատարվում է նշում, եթե անձն իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը.

գ² Այս ենթաբաժնի «գ» կետում կատարվում է նշում, եթե անձը Կազմակերպությունից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ.

դ² Այս ենթաբաժնի «դ» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա»-«գ» կետերի իմաստով չի հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

ե² Այս ենթաբաժնի «ե» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող

պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

7) «Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում լրացվում են անձի՝ Կազմակերպության իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին: Այս ենթաբաժնում կատարվում է նշում իրական շահառուի կողմից Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ: Փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկողության իրականացման վերաբերյալ կատարվում է նշում, եթե իրական շահառուն Կազմակերպությունը վերահսկում է իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կամ կարող է այն վերահսկել իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու դեպքում: Եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն, այս ենթաբաժնում նաև կատարվում է նշում իրական շահառուի՝ Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ.

8) «Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

5. Հայտարարագրի 5-րդ բաժինը (Միջանկյալ իրավաբանական անձինք) լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի իրական շահառուն կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձն ունի անուղղակի մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Այս բաժինը ենթակա է լրացման յուրաքանչյուր միջանկյալ իրավաբանական անձի համար առանձին՝ բոլոր միջանկյալ իրավաբանական անձանց քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով²

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են միջանկյալ իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպատիրավական ձևի մասին.

2) «Իրական շահառուի տվյալները» ենթաբաժնում լրացվում են այն իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար այս ենթաբաժնում լրացված կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ: Եթե միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները լրացվում են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի համար, այս ենթաբաժինը ենթակա չէ լրացման:

3) «Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժինը ենթակա չէ պարտադիր լրացման: Այս ենթաբաժինը կարող է լրացվել, եթե միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում: Այս ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին:

6. Հայտարարագրի 6-րդ բաժինը (Լրացուցիչ նշումներ) լրացվում է, եթե առկա են լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին: Այս ենթաբաժնում կարող են լրացվել հավելյալ պարզաբանումներ իրական շահառուի կողմից Կազմակերպությունը վերահսկելու հիմքերի վերաբերյալ, պետության (համայնքի) այն մարմինների վերաբերյալ, որոնք իրականացնում են Կազմակերպության վերահսկողությունն այն դեպքում, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, և այլ պարզաբանումներ հայտարարագրի առնչությամբ:

7. Հայտարարագիրը լրացնում և ստորագրում է հայտը ներկայացնող անձը: Հայտարարագրի էջերի համարակալումը և հայտարարագրում էջերի քանակի մասին նշում կատարելը պարտադիր չէ:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** 1.2 հավելվածը չի ներկայացվում մասնակցի կողմից եթե կրտսեյի է սույն հրավերի N 1 հավելվածով սահմանված՝ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացնելու վերաբերյալ կարգավորումը, ինչպես նաև եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ:*

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/86» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափաբաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի իրականացման ուղղությամբ Երևան քաղաքում 10 բազմաբնակարան շենքերի /Աջափնյակ, Ավան, Արաբկիր վարչական շրջաններ/ հարթ տանիքներին արևային ֆոտովոլտային կայանների մատակարարման և տեղադրման աշխատանքների կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում			
2	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի իրականացման ուղղությամբ Երևան քաղաքում 6 բազմաբնակարան շենքերի /Էրեբունի, Կենտրոն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ/ հարթ տանիքներին արևային ֆոտովոլտային կայանների մատակարարման և տեղադրման աշխատանքների կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում			
3	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի իրականացման ուղղությամբ Երևան քաղաքում 10 բազմաբնակարան շենքերի /Նոր-Նորք վարչական շրջան/ հարթ տանիքներին արևային ֆոտովոլտային կայանների մատակարարման և տեղադրման աշխատանքների կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում			
4	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի իրականացման ուղղությամբ Երևան քաղաքում 9 բազմաբնակարան շենքերի /Նոր-Նորք, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններ/ հարթ տանիքներին արևային ֆոտովոլտային կայանների մատակարարման և տեղադրման աշխատանքների կատարման տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում			
